Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 14-ի թիվ 3-Ա որոշման վերաբերյալ եզրակացություն չենք կարող ներկայացնել, քանի որ որոշման անբաժանելի մաս համարվող հավելվածները կից չի ներկայացվել:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 14-ի թիվ 1-Ա–2-Ն և 4-Ա-19-Ա որոշումների վերաբերյալ առարկություններ չունենք:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝

Լ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Կատարող՝ Ա. Գևորգյան

24.02.2023թ.

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավարի 2023 թվականի փետրվարի 22-ի N0-25/135 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 14-ի N 1-Ա - N19-Ա որոշումների վերաբերյալ.

ՈՒսումնասիրությամբ պարզվել է, որ որոշումների մեջ օրենսդրական տեխնիկայի կանոնների տեսակետից առկա են հետևյալ թերությունները՝

1. N 2-Ն որոշման բովանդակությունը չի համապատասխանում որոշման վերնագրին և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի դրույթներին: Անհրաժեշտ է համարակալել որոշման բոլոր դրույթները:
2. N 3-Ա որոշման անբաժանելի մաս համարվող հավելվածը որոշմանը կից ներկայացված չէ:
3. N 4-Ա որոշման վերնագրում և բովանդակությունում փոփոխվող որոշման ամսաթիվը տարբեր է գրառված:
4. N 8-Ա որոշման 2-րդ կետի դրույթները սխալ են համարակալված:
5. N16-Ա և N17-Ա որոշումների նախաբաններում անրաժեշտ է հղում կատարել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետին, բացի այդ N17-Ա որոշման բովանդակությունում «խմբագրությամբ» բառից հետ անհրաժեշտ է գրառել «համաձայն հավելվածի» բառերը:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Գ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

2 մարտ 2023թ